ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/27» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 18.06.2019թ.
Ժամը 14:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲՖԿԾ պետ Ա. Պապյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը:
Բացակայում է ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲՖԾ առաջատար մասնագետ Ռ.Զաթոյանը,

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ.Ամիրյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին

(Մ.Ամիրյան)

1.1 Քանի որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի **04.06.2019թ.**-ին տրամադրած՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չեն ունեցել, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող: Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով չի քննարկվել (գնահատվել):

1.2 **30.05.2019թ**-ին գնումների համակարգող Մ.Ամիրյանը Armeps.am համակարգի միջոցով ծանուցեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում և կարգով /3 աշխատանքային օրվա ընթացքում/ ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ m.amiryan@mil.am էլեկտրոնային հասցեին: Սահմանված ժամկետում մասնակիցները ուղարկել են վերը նշված փաստաթղթերը: Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պայմաններին, բացառությամբ **«Աևադա Ծատուրյան» Ա/Ձ-ի կողմից** հրավերի Հավելված 6.1-ով ներկայացված ապրանքների անվանումները չեն համապատասխանում հրավերով սահմանված չափաբաժինների ապրանքների անվանումներին, ինչպես նաև 8-րդ և 9-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում նշված չեն «..մեկ ծայրը D15 գլխիկը՝ ներքին պարույրի, մյուս ծայրը ջրախառնիչին միացնելու համար արտաքին պարույրի վերաբերյալ տեղեկություն», իսկ 11-րդ չափաբաժնի մասով հրավերով սահմանվել է «... խողովակը նիկելապատ զսպանակաձև», սակայն Մասնակցի կողմից նշվել է «միայն նիկելապատ»:

13.06.2019թ. Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրեց նիստը և հանձնաժողովի քարտուղարը մասնակցին ծանուցեց մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրեց ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերի շտկված տարբերակները, որոնք հանձնաժողովի անդամների կողմից քննարկվելուց հետո գնահատվեցին հրավերի պայմաններին համապատասխանող:

18.06.2019թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման չափորոշիչները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/27» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջիններիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակիցներ՝ համաձայն ստորև ներկայացվող աղուսյակի, և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Չ/հ	1-ին տեղ զբաղեցնող /ընտրված/ կազմակերպություն
12, 13, 16, 17, 18, 19, 20, 29, 30, 32, 33, 34, 35	«Արմեն Զաքարյան» Ա/Ձ

10	«ԲԱՐՍԻՍ» ՍՊԸ
39	«Էքսպրես Շին» ՍՊԸ
3	«Հիդրո Գրուպ» ՍՊԸ
4, 5, 7, 14, 15	«Նարսան» ՍՊԸ
8, 9, 11, 21, 22, 23, 24, 25, 27, 28, 36, 37	«Սևադա Ծատուրյան» Ա/Ձ
2	«Վոլոդյա Նիկողոսյան» Ա/Ձ

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/27» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ.Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	_____	Ա. Մուրադյան
Գնահատող	_____	Ա. Պապյան
Գնումները համակարգող	_____	Մ.Ամիրյան